

Palmdale-ից Burbank Ծրագրի Հատված ՄԻԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ 2022թ




Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը

Կազմում է Կալիֆորնիայի Արագընթաց Երկաթուղային Համակարգի Փուլ 1-ինի մասը, որը միացնում է Անտելոպյան հովիտը (Antelope Valley) Սան Ֆեռնանդո Հովտին (San Fernando Valley): Ծրագրի մոտավորապես 31-ից 38 մղոն երկարությամբ այս հատվածը իրար կմիացնի Լոս Անջելեսի Վարչաշրջանի երկու կարևոր բնակչության կենտրոնները՝ միմյանց կապակցելով բազմամղալ տրանսպորտային հանգույցները Փալմդեյլում և Բըրբանքում: Ծրագրի այս հատվածի հատակագիծը սկիզբ է առնում հյուսիսում գտնվող Palmdale քաղաքի հարավային հատվածից և հասնում է մինչև Burbank հարավում: Palmdale Կայարանը, և մինչև Palmdale-ի Spruce Court տանող ուղին, գնահատվել են որպես Bakersfield-ից Palmdale Ծրագրի Հատվածի մաս, ինչը հաստատվել է Ղեկավար Մարմնի Խորհրդի կողմից 2021թ-ի օգոստոսին: Բըրբանքի Օդանավակայանի Կայարանը (Burbank Airport Station) գնահատվել է որպես Burbank-ից Los Angeles Ծրագրի Հատվածի մաս, ինչը հաստատվել է Ղեկավար Մարմնի Խորհրդի կողմից 2022թ-ի հունվարին: Ծրագրի այս հատվածը կարևոր կապ կապահովի Bakersfield-ից Palmdale և Burbank-ից Los Angeles Ծրագրի Հատվածների միջև:

Ծրագրի Առավելությունները

- Արագընթաց էլեկտրոնային գնացքները կլիցքավորվեն վերարտադրվող էներգիայով, կգրավեն ավելի շատ ուղևորների, և կտեղափոխեն նրանց ավելի հեռու և ավելի արագ՝ զրոյական արտանետմամբ
- Կմիացնի Palmdale-ի և Բըրբանքի Օդանավակայանի Կայարանները (Burbank Airport stations), որը նախատեսված է ապահովել առանց կանգառի 13 րոպե տևողությամբ երթևեկությամբ
- Համայնքի, շրջանի և նահանգի համար կստեղծվեն տնտեսական և զբաղվածության առավելություններ
- Արագընթաց երկաթուղին կկապակցվի շրջանին Մետրոլինկին (Metrolink) առկա և ծրագրվող կայարանների միջոցով
- Կբարձրանա կատարողականությունը և անվտանգությունը՝ հաջորդ սերնդի ազդանշանային համակարգերի (Գնացքների Վերահսկողություն (Positive Train Control), ներխուժման խոչընդոտներ և ահագանգման համակարգեր, երկրաշարժերի վաղաժամ գգուշացում և այլն) օգտագործման շնորհիվ
- Կապահովի կապակցում Brightline West գնացքին Palmdale-ում դեպի Las Vegas

Վեց Կառուցման Այլընտրանք, որոնք գնահատվել են Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի համար



Ներդրելով Կալիֆորնիայի ապագայում

Բարձրացնել շարժականությունը նահանգի բնակչության աճին պատրաստվելու համար, որը ակնկալվում է հասնել 44 միլիոնի մինչև 2049թ.:

Բարելավել Օդի Որակը տեղափոխելով մարդկանց ավտոմեքենաներից և օդանավերից վերատադրվող էներգիայով մաքուր գնացքներ

Կրճատել ճամփորդության տևողությունը և տրամադրել ավելի արագ, ավելի հարմարավետ երթևեկության եղանակ տարածաշրջանում և նահանգում ճամփորդելու համար

Խթանել աշխատատեղերի աճը ողջ նահանգում, ներկայումս շինարարության ոլորտում, և հետագայում սպասարկման և գործարկման աշխատատեղերի

Տրանսպորտային ենթակառուցվածքում **ներդրումների կատարումը** առանցքային դեր ունի նահանգը տնտեսական հզոր կենտրոն դարձնելու գործում

Փալմդեյլ (Palmdale)

- Փալմդեյլի տրանսպորտային կենտրոնը, նախկինում հաստատված որպես Bakersfield-ից Palmdale Ծրագրի Հատվածի մաս, կներառի Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղային ծառայությունը և կփոխակերպի բնակիչների կյանքը, աշխատանքը և ճամփորդությունը Փալմդեյլ քաղաքում և Անտելոպյան Հովտում (Antelope Valley):
- Փալմդեյլ քաղաքի և Կալիֆորնիայի Արագընթաց Երկաթուղու Ղեկավար Մարմինը աշխատում են միասին, որպեսզի մշակեն կայարանային տարածքի այնպիսի նախագիծ, որը կօգնի քաղաքին խթանելու տնտեսական զարգացումը, խրախուսելու կայարանի տարածքի զարգացմանը և ընդլայնելու կապակցումները այլ տրանսպորտային տեսակների հետ:
- Տարածաշրջանային նախագծերի շրջանակում հնարավոր է արագընթաց երկաթուղու կապակցումը Brightline West*-ին Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղու համակարգի հետ, Palmdale-ում Բարձր Անապատային Միջանցքի (High Desert Corridor) ուղով Apple Valley-ից, Las Vegas-ում (Nevada) ավարտվող գծին:

Brightline West, Brightline-ը փոխկապակցված ընկերություն է, առաջարկվող արագընթաց ուղևորատար երկաթուղային համակարգ է, որը 260 մղոն կմիացնի Լաս Վեգասի և Լոս Անջելեսի միջև:

Բըրբանք (Burbank)


- Բըրբանքի Օդանավակայանի Կայարանը, հաստատված Burbank-ից Los Angeles ծրագրի հատվածի համար, կներառի Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղային ծառայությունը San Fernando Valley-ում և շատ մոտ կլինի (մոտավորապես 500 ֆուտ) դեպի ապագայում փոխարինման ենթակա օդանավակայանի տերմինալ, ապահովելով օդային-երկաթուղային միջմոդալ կապակցում:
- Կալիֆորնիայի արագընթաց երկաթուղային գծերը կայարանից դեպի հյուսիս և հարավ կանցնեն ստորգետնյա ճանապարհով Բըրբանքի օդանավակայանի տակ և նվազագույնին կհասցնեն ազդեցությունները բիզնեսների և բնակելի տարածքների վրա:
- Պահանջվում է մշտական համակարգում/ուղորդում Burbank-Glendale-Pasadena Օդանավակայանի Ղեկավար մարմնի և Դաշնային Ավիացիայի Վարչության հետ:

Ծրագրի հատվածների գետնուղիները

Ելնելով ծրագրի տարածքային առանձնահատկություններից, որը ներառում է Անտելոպյան Հովտի (Antelope Valley) բարձր անապատային շրջանները, Սուրբ Գաբրիելի Լեռնաշղթայի (San Gabriel Mountain range) բարձր լեռները և Սան Ֆերնանդո հովտի (San Fernando Valley) խիտ բնակեցված քաղաքային շրջանները, գետնուղիները գործարկված են ծրագրի հատվածի ողջ երկայնքով: Այդ գետնուղիները լուծում են տեղանքային խնդիրներով պայմանավորված սահմանափակումների (բարձր լեռներ) հարցը, և դրանց շնորհիվ հնարավոր է խուսափել կամ նվազեցնել ազդեցությունները համայնքների, կենսամիջավայրի և կառույցների վրա (տներ, մայրուղիներ, և այլն): Գետնուղիների տարածքների շրջանակում, բարդ երկրաբանական պայամանների և ճեղվածքներով գոտիների պարագայում, հիմնական նկատառումները հաշվի են առնված նախագծման տարրերում, ինչպիսիք են թունելի տեսակը, սեյսմիկ ճեղվածքների խոռոչները, մուտքի կետերը, ձայնամեկուսացումը և անվտանգությունը: Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի գետնուղիների մոտավոր երկարությունը կազմում է 22-ից 28 մղոն:

Նախընտրելի Այլընտրանքը՝ SR14A, ներառում է 4 գետնուղի՝ ընդհանուր 28 մղոն երկարությամբ:

Գետնուղիների տեսակներ



Կառուցման Լրացուցիչ Այլընտրանքներ՝ SR14A, E1A և E2A

Կալիֆորնիա Արագընթաց Երկաթուղու Ղեկավար Մարմինը (Ղեկավար Մարմին) հետևողականորեն աշխատում է հանրային գործակալությունների և համայնքի հետաքրքրված կողմերի հետ՝ նախագծում շտկումների կատարման համար, որպեսզի հետագայում հնարավոր լինի խուսափել կամ նվազագույնին հասցնել ազդեցությունները գոյություն ունեցող կառույցների, հողի օգտագործման, շրջակա միջավայրի ռեսուրսների և համայնքների վրա: Արդյունքում, 2020թ-ին Ղեկավար Մարմինը մշակել է կառուցման լրացուցիչ այլընտրանքներ՝ շրջակա միջավայրի վերանայման գործընթացում ներառելու նպատակով:

Այս լրացուցիչ այլընտրանքները հիմնված են նախկին Կառուցման Այլընտրանքների՝ Բարելավված SR14, E1 և E2 վրա, սակայն փոփոխվել են՝ Փալմդեյլից (Palmdale) հարավ որոշ զգայուն ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով, այդ թվում


Ունա լիճը (Una Lake):

Լրացուցիչ Կառուցման այլընտրանքներն են SR14A, E1A և E2A: Նախկին այլընտրանքները՝ Բարելավված SR14-ը, E1-ը և E2-ը, ներառված են շրջակա միջավայրի վերանայման համար՝ ընդհանուր վեց կառուցման այլընտրանքների մասով, որոնք վերլուծված են Շրջակա Միջավայրի Ազդեցությունների հաշվետվության/ Շրջակա Միջավայրի Ազդեցությունների հայտարարության (EIR/EIS) Փաստաթղթերի նախագծում: EIR/EIS Փաստաթղթերի նախագծում հասցեավորված են շատ ոլորտներ, այդ թվում երթևեկությունը, օդի որակը, աղմուկը, թրթռումները, էպետիկ հարցերը և շատ ավելին:

Նահանգի Նախընտրելի Այլընտրանքը՝ SR14A

Այլընտրանքային տարբերակը, որը լավագույնս կերպով հավասարակշռում է բնապահպանական, համայնքային, կատարողական, գործառնական և ծախսատարության գործոնները հայտնի է որպես նախընտրելի Այլընտրանք: Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի համար Նահանգի Նախընտրելի Այլընտրանքը՝ SR14A-ը կազմում է մոտավորապես 38 մղոն և միմյանց է կապակցում Փալմդեյլ (Palmdale) և Բըրբանք (Burbank) քաղաքները: Այն մասնակիորեն կօգտագործի Մետրոպոլիտենի (Metrolink) արտահերթ օգտագործման իրավունքով ճանապարհը հնարավորին սահմաններում մոտավորապես 3 մղոն San Fernando Valley-ում: Նախընտրելի Այլընտրանքը կխուսափի Ունա լիճը հատելուց և նվազագույնին կհասցնի ազդեցությունները մոտակա խոնավ տարածքների վրա: Նախընտրելի Այլընտրանքի երկայնքով գործարկվող գնացքները ամբողջությամբ կանցնեն ստորգետնյա Acton-ի համայնքով, Անջելեսի Ազգային Անտառով (Angeles National Forest) և Սուրբ Գաբրիելի Լեռների Ազգային Հուշարձանով (San Gabriel Mountains National Monument): SR14A-ը նույնպես անցնում է ստորգետնյա Խաղաղովկյանոսյան Գագաթի արահետը (Pacific Crest Trail) հատելիս՝ խուսափելով արահետի վրա ազդեցությունների ներգործումից: San Fernando Valley-ի հյուսիսային հատվածով, SR14A-ը անցնում է գետնուղով, և դուրս է գալիս Հանսենի Անբարտակի տարածքում (Hansen Dam Spreading Grounds), և այնուհետև հետևում է Metrolink/Union Pacific միջանցքը դեպի Burbank:

Կառուցման Այլընտրանքներ [նկար]



- Առաջարկված Արագընթաց Երկաթուղու Կայարան
- Մետրոպոլիտենի (Metrolink) Կայարան
- Մետրոպոլիտենի
- Այլ արագընթաց երկաթուղի նախագծի բաժին

Արագընթաց Երկաթուղու ուղու


- մակարդակներ
- Բարձրացված/Օդային Կառույցներ
- Գետնուղի
- Կառույցի մուտքի կետ

- Սուրբ Գաբրիելի Լեռների Ազգային Հաշարձան
- Անջելեսի Ազգային Անտառ
- Կախարդական Լեռների վայրի բնության տարածքներ

0 5,000 10,000 Feet
0 2,000 4,000 Meters

ՆԱԽՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ/ԵՆԹԱԿԱ Ե ՓՈՓՈԽՄԱՆ - ԱՐԱԳԸՆԹԱՑ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՈՒՂԻՆ ՈՐՈՇՎԱԾ ԶԷ Աղբյուր՝ Արագընթաց Երկաթուղու Ղեկավար Մարմին, 10/2018
Հիմնական քարտեզի աղբյուր՝ Ազգային աշխարհագրական կազմակերպություն (National Geographic), 2016

Ծրագրի Զարգացման Գործընթաց [Նկար]



Ասե՛ք մեզ Ձեր կարծիքը

Ներգրավված եղե՛ք, այցելելով meethrsocal.org կայքը, որտեղ Դուք կարող եք

- Հարցեր տալ և թողնել Ձեր մեկնաբանությունները կամ մտահոգությունները
- Հանդիպում խնդրել ծրագրի թիմի հետ
- Դեկավար Մարմնին հրավիրել Ձեր կազմակերպության մտապահ հանդիպումներից մեկին
- Հետևեք մեզ սոցիալական կայքերում
- @cahsra
- facebook.com/CaliforniaHighSpeedRail
- @cahsra (Twitter)
- California High-Speed Rail Authority (LinkedIn)
- youtube.com/CAHighSpeedRail

Կապ հաստատե՛ք մեզ հետ

- (800) 630-1039
- California High-Speed Rail Authority
Southern California Regional Office
355 S. Grand Avenue, Suite 2050
Los Angeles, CA 90071
- Office hours by appointment only
- <https://hsr.ca.gov/palmdale-to-burbank>
- Palmdale_Burbank@hsr.ca.gov

